



ՄՈՒՏԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Մինաս երբ չարութիւն ընէր, քաջութիւն չէր ունէր խոստովանելու եւ պատիժէն վախնալով շատ անգամ յանցանքը ուրիշին վրայ կը ձգէր: Բոլորը բարձրաձայն «ստախօս» կը կոչէին զինք:

Օր մը, դրացին Մինասին մօրը գանգատելու եկաւ, մրգաստանին պտուղները գողցած ըլլալուն համար:

- Երէկ իրիկուն,- ըսաւ դրացին,- պարտեգիս մէջ աղմուկ մը լսեցի, շուտով վազեցի, բայց գողը փախաւ: Հակառակ որ գիշեր էր, հասակէն ճանչցայ զինք, տղադ ըլլալու էր:

Մինաս ուզեց պաշտպանել իր անմեղութիւնը, բայց ո՛չ հայրն ու մայրը, ոչ ալ դրացին հաւատացին իր խօսքերուն: Արդէն ո՛վ կը հաւատայ ստախօսին ըսածներուն:

Մինաս խստօրէն պատժուեցաւ, թէւ այս անգամ անմեղ էր: Բայց վատը այն էր, որ պատահածին լուրը տարածուեցաւ գիւղին մէջ: Ու երբ յաջորդ առտու կանուխ դարոց գնաց, բոլոր ընկերները բան մը կը փսփսային իրարու: Մինաս լսեց «ստախօս, գող» մակդիրները:

Ընկերներէն միայն Լեւոն բան չէր ըսեր: Ան երբեմն-երբեմն կը դեղներ ու կը կարմրէր: Քիչ վերջ փսփսուքը դադրեցաւ: Ուսուցիչը ներս մտաւ ու խիստ ակնարկ մը նետեց Մինասին վրայ, որ կը ջանար արցունքները զսպել:

Այն ատեն, Լեւոն, բոլորովին գունատ, ոտքի ելաւ եւ հեկեկաց.

- Բան մը ունիմ ըսելիք:

- Խօսէ՛, Լեւո՛ն,- ըսաւ ուսուցիչը:

- Գողը եւ որկրամուրը Մինասը չէ, պարո՛ն ուսուցիչ, այլ ես եմ, զիս պատժելու էք:

Տղան ու ուսուցիչը հիացան Լեւոնի քաջութեան վրայ: Կը կարծէին, թէ Մինաս պիտի ուրախանար, քանի որ բոլորը ճանչցան իր անմեղութիւնը: Բայց ո՛չ, ան տխուր էր եւ ինքնիրեն կ'ըսէր.

- Լեւո՛նը, հակառակ իր յանցանքներուն, ինձմէ լաւ է, որովհետեւ բոլորին առջեւ քաջութիւն ունեցաւ խոստովանելու իր յանցանքը: Ասկէ ետք, ամէն ոք իր ըսածին պիտի հաւատայ: Իսկ եթէ վաղը ուրիշ յանցանք մը նետեն իմ վրայ, այսօրուան պէս պիտի չկարենամ անմեղութիւնս փաստել: Այլեւս չեմ ուզեր սուտ խօսիլ:

Այս ըսելով Մինաս վազեց Լեւոնը համբուրելու, եւ իրմէ ներողութիւն խնդրեց: Տուն վերադառնալէն ետք, հայրիկին ու մայրիկին ալ խոստացաւ այլեւս սուտ չխօսիլ ու անկեղծ ըլլալ:

Նոյն գիշեր, դրացին եկաւ Մինասին մայրիկէն ներողութիւն խնդրելու:








ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ՎՈՏՆԵՆ-ՇԱՀԻՆԵՆ
ՆԿԱՐԱՍՈՐԵՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵՆ

ԾԻԾԱՂ


- Հրդեհ չէ, մայրի՛կ, մի՛ անհանգստանար:
Գազիկն է, որ իր տափատը կ'արդուկէ:




Փոխադրամիջոցները ինչպե՞ս եւ ո՞ր կը քալեն:
Միացու՛ր:



Թիւերը միացնելով ամբողջացո՛ւր պատկերը,
ապա գունաւորե՛ նախասիրած գոյներովդ:



Կապիկը շա՛տ անօթի է եւ պանան կ'ուզէ:
Օգնե՛ անոր՝ գտնելու պանանին հասնող
ճամբան:



ԻՇԽԱՆՈՒՅԻՆ ՈՒ ՎԻՇԱՊԸ

Երեք եղբայրները միաբերան գոռացին.

- Հոսկե հեռացիր, ո՛վ վիշապ. ոչինչ ունիս մեր մօտ:

Վիշապը պատասխանեց.

- Պիտի չմեկնիմ այստեղէն, մինչեւ փունջ մը մազ չտաք կնոջս վարսէն կամ չթոյլատրէք որ գէթ անգամ մը, մէկ անգամ եւս տեսնեմ զինք:

- Ի՞նչ, ինչպե՛ս պիտի տեսնես, երբ քու եւ մեր միջեւ կայ այս հսկայ պարիսպը,- պատասխանեցին երեք եղբայրները:

-Ոչ իսկ մէկ թել տուե՛ք այդ գազանին եւ մի՛ թողուք որ տեսնէ իշխանուհին,- ըսաւ մեծ եղբայրը միւսներուն:

Բայց երկու եղբայրները առաջարկեցին.

-Ոչինչ, պիտի թողուք, որ զինք վերջին անգամ մըն ալ տեսնէ: Հիմա, պարիսպին վրայ ճեղք մը կը բանանք, հոսկէ թող տեսնէ զայն: Որմէ ետք, խաղաղութեամբ իրարմէ կը բաժնուին:

Ապա, պարիսպին վրայ ճեղք մը բացին:

Խորամանկ ու նենգ վիշապը ձեռքը ճեղքէն ներս երկարեց, փախցուց իշխանուհին եւ սկսաւ ուղղուիլ դէպի բարձր լեռները: Կրտսեր եղբայրը խնդաց ու ըսաւ.

- Եղբայրնե՛ր, երբեք մի՛ վախնաք: Հիմա, ի՛մ կարգս եկաւ:

Այս ըսելով, աղեղէն արձակեց 12 նետ, որոնցմէ իւրաքանչիւրը յաջողեցաւ մխրճել վիշապին տասներկու գլուխներուն մէջ: Վիշապը ինկաւ գետին ու մեռաւ:

Երեք ազնիւ ու քաջ եղբայրները, իշխանուհիին հետ միասին, ուրախութեամբ եւ երգելով պալատ մտան:

Հայրն ու մայրը երջանկութեան արցունքներով դիմաւորեցին իշխանուհին ու երեք եղբայրները եւ զանոնք արժեքաւոր նուէրներով վարձատրեցին:

Երբ կրկին ամուսնութեան խօսք եղաւ, իշխանուհին ըսաւ.

- Ո՛չ ոսկի հագուստով մարդ կ'ուզեմ, ոչ ալ կը մտածեմ հարուստ երիտասարդի մը մասին: Կարելորդ ոսկի սիրտ ունենալն է եւ ոչ՝ հարստութիւն:

Ապա, իշխանուհին որպէս ամուսին ընտրեց կրտսեր եղբայրը, որովհետեւ ան սպանած էր վիշապը:

Իսկ իշխանը իր եղբօր երկու աղջիկներն ալ կնութեան տուաւ միւս եղբայրներուն:

Այսպիսով, անգամ մը եւս պալատը լեցուեցաւ երջանկութեամբ ու ծիծաղով, ու գիւղի բոլոր բնակիչները քառասուն մէկ օր ու քառասուն մէկ գիշեր հարսանեկան բացառիկ խնճոյքներով պատուեցին փրկարար եղբայրները:



(Վերջ)

ՅԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

1.- Ժամանակին, երբ թուղթ նամակները ըստ հասցեներու կը բաժնուէին, մեքսիքացիի մը տան մէջ 10 թն չբաժնուած նամակ գտնուած է, որուն հետեւանքով ան ձերբակալուած է ոստիկանութեան կողմէ:

2.- Ինտոնեզիոյ մէջ կը խօսուի աւելի քան 700 լեզու:

3.- Չինացի գոյգ մը, այնքան անհամբեր էր հանդիպելու իր ազգականներուն, որ իր 3 տարեկան մանչը օղանաւին մէջ մոռցած էր:

4.- Մարդ արարածը իր կեանքին երկու տարիէն աւելին հեռաձայն խօսելով կ'անցընէ:

5.- Մեր ձեռքին մատները մկաններ չունին: Ասիկա շատ բնական է, մեր մատները կը ղեկավարուին ջիղերուն կողմէ:

6.- Տարուան մէջ 8760 ժամ կայ:

7.- Գիտնալու համար, թէ կարգ մը հեռաւոր մոլորակներու վրայ կեանք գոյութիւն ունի՞, ամերիկացի աստղագետներ որոշած են ուսումնասիրել անոնց մթնոլորտին ապականումը: Եթէ իսկապէս ապականում կայ, կը նշանակէ, թէ կեանք կայ:

